Արձանագրություն N 2

«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/31» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան **02.04.2018թ.**
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Թևոսյան, Մ. Կլեկչյան, Ս. Սահակյան, Ե.Մաթևոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Ղավալյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/31» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ս. Ներսիսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2019 թվականի ապրիլի 2-ին, ժամը 10:00-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. «ԵՔ- ԳՀԾՁԲ-19/31» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ս. Ներսիսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Երևանի Կանխարգելիչ ախտհանում» ՓԲԸ
2	«ԵրՄիք» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ս. Ներսիսյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցների անվանումները	
			«Երևանի Կանխարգելիչ ախտհանում» ՓԲԸ	«ԵրՄիք» ՍՊԸ
			առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ
1	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված հակահամաճարակային (դեռատիզացիայի) ծառայություններ	10,000,000	3,840,000	13,000,000

3.2 Վերը նշված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ս. Ներսիսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Երևանի Կանխարգելիչ ախտհանում» ՓԲԸ	բավարար
«ԵրՄիք» ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ս. Ներսիսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «**ԵՔ-ԳՀԾՁԲ-19/31**» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **«Երևանի Կանխարգելիչ ախտհանում» ՓԲԸ-ն**, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ս. Ներսիսյան)

3.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

3.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման և փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ս. Ներսիսյան
Անդամներ՝		Ն. Թևոսյան
		Մ. Կլեկչյան
		Ս. Սահակյան
		Ե. Մաթևոսյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան